Հայաստան

2023 թ. փետրվար

2022 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ՄԱԿ ՓԳՀ-ն **1,102 ոչ պարենային ապրանք** է տրամադրել **215 ընտանիքի** (935 մարդ), որոնք տեղահանվել էին 2022 թ. սեպտեմբերի 13-ին՝ հայ-ադրբեջանական սահմանին իրավիճակի սրացումից հետո:

2022 թվականի ընթացքում մոտ 1,000 մարդ է զանգահարել **ՄԱԿ ՓԳՀ Թեժ գիծ՝** ապաստանի ընթացակարգերի, ՄԱԿ ՓԳՀ եւ գործընկերների կողմից տրամադրվող աջակցության, վերաբնակեցման եւ այլ հարցերով:

Պաշտպանության եւ տեւական լուծումներ գտնելու նպատակով ձեռնարկվել է 841 տեղահանված տնային տնտեսությունների **գործերի վարում՝** վեր հանելով եւ հասցեագրելով կոնկրետ կարիքներն ու պաշտպանության ռիսկերը:

ՄԱԿ ՓԳՀ ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ առ 2022 թ. հունիս*

Փախստականներ**	**34.274**
Ապաստան հայցողներ	**395**
Քաղաքացիություն չունեցող անձինք	**816**

Ծագման երեք խոշորագույն երկրները

Փախստականներ



Ապաստան հայցողներ



*ՄԱԿ ՓԳՀ 2022 թ. միջնամյա միտումներ, ՄԱԿ ՓԳՀ Տվյալների որոնման հարթակ եւ ՀՀ կառավարություն

** Ներառում է փախստականի իրավիճակում գտնվող մարդկանց

ՈՒԿՐԱԻՆԱՑԻ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՐՁԱԳԱՆՔ

Փետրվարի կեսի դրությամբ **511** ուկրաինացի փախստական է դիմել փախստականի կարգավիճակ ստանալու համար եւ **303-ը** ճանաչվել են փախստական:

Առաջնային կարիքներ. ապաստան հայցողների մեծամասնությունը սննդամթերքի, հագուստի, հիգիենայի պարագաների, դեղամիջոցների, կացարանի կարիք ուներ:

Դրամական աջակցություն. 190 տնային տնտեսության/398 Ուկրաինայից եկած փախստականների տարբեր կարիքների համար դրամական աջակցություն է տրամադրվել:

Կրթություն. ՄԱԿ ՓԳՀ տվյալներով՝ Ուկրաինայից եկած 64 երեխա ընդգրկվել է նախնական կրթական հաստատություններում: ՄԱԿ ՓԳՀ-ն եւ գործընկերները, պետական կառույցների հետ համատեղ, վերահսկում եւ աջակցում են փախստական երեխաների՝ դպրոցներում ընդգրկվելու գործընթացին:

Կարողությունների ձեւավորում. 2022 թ. ՄԱԿ ՓԳՀ-ն սարքավորումներ եւ այլ օժանդակություն է տրամադրել «Ուկրաինական ֆորում» նորաստեղծ ՀԿ-ին՝ Ուկրաինայից եկած փախստական ընտանիքներին ուղղված մարդասիրական եւ ինտեգրման միջոցառումներին օժանդակելու նպատակով:

Խաղաղ գոյակցություն, ներառում. «Ուկրաինական ֆորում» եւ «Սյունիք-զարգացում» ՀԿ-ների հետ համագործակցությամբ կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են TED զրույցները, ձեռարվեստի նմուշների վաճառք, երաժշտական միջոցառումներ, հանդիպում հայտնի ուկրաինացի գործչի հետ եւ ինտերակտիվ դասընթաց «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակի» վերաբերյալ:

ՈՒՇԱԳՐԱՎ ՓԱՍՏԵՐ

Մասնակցային գնահատում (ՄԳ)

ՄԱԿ ՓԳՀ-ն կատարել է ՄԳ՝ գնահատելու եւ վերլուծելու ՀՀ տեղահանված բնակչության առջեւ ծառացած կարիքներն ու մարտահրավերները: Դրանից հետո պետական եւ ոչ պետական շահագրգիռ կողմերի հետ անցկացվեց աշխատաժողով, որի ընթացքում հաստատվեցին գնահատման արդյունքները եւ ներկայացվեցին առաջարկություններ:

Փոխըմբռնման հուշագիր (ՓՀ)

2023 թվականի հունվարին ՄԱԿ ՓԳՀ-ն փոխըմբռնման հուշագիր ստորագրեց Կանանց ռեսուրսային կենտրոնի հետ՝ միավորելու տեղահանված անձանց վրա անդրադարձող՝ գենդերային հիմքով բռնության կանխարգելման եւ արձագանքման ուղղությամբ տարվող իրենց ջանքերը:

Վարդենիսը միանում է քարոզարշավին

2023 թ. փետրվարին Վարդենիս համայնքի ղեկավարը միացավ «Քաղաքները փախստականների հետ» քարոզարշավին՝ ստորագրելով փախստականների հետ Համերաշխության հայտարարություն, այդպիսով դառնալով վեցերորդ քաղաքը Հայաստանում, որը համերաշխություն է հայտնում իր քաղաքում բնակվող՝ հարկադրաբար տեղահանված անձանց:

Ուկրաինացի փախստական կինն ավանդական ուկրաինական ձեռագործ հուշանվերներ է վաճառում 2022 թ. դեկտեմբերի 17-ին Երեւանում տեղի ունեցած Սուրբծննդյան տոնավաճառին: © ՄԱԿ ՓԳՀ/Տաթեւիկ Բաղալյան

Առանցքային գերակայություններ

- **Շահերի պաշտպանության հիմնական ոլորտներ.** շահերի պաշտպանության ուղղված ՄԱԿ ՓԳՀ միջամտությունների նպատակն է քաղաքականությունները, իրավական դաշտը եւ աշխատաեղանակները համահունչ դարձնել միջազգային չափանիշներին, ինչը կօգնի տարածքի եւ ապաստանի արդարացի ու գործուն ընթացակարգերի հասանելիություն ապահովել միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց համար:
- **Ապաստանի ընթացակարգեր.** հաշվի առնելով 2022 թվականին արձանագրված առաջընթացը, երբ բարելավվեցին ապաստան հայցողների գրանցման գործընթացները, ՄԱԿ ՓԳՀ-ն կշարունակի ապաստանի պետական ընթացակարգերի համակարգված կատարելագործման մշտադիտարկումն ու աջակցությունը:
- **Ընդունման պայմաններ.** ՄԱԿ-ի Փախստականների գործակալությունն սատարում է ՀՀ կառավարությանը՝ բարելավելու ընդունման պայմանները եւ բավարարելու առավել խոցելի տեղահանված բնակչության հիմնական կարիքները, մշտադիտարկում է ընդունման կենտրոնները՝ ապաստան հայցողներին ժամանակին անհատական օգնություն տրամադրելու նպատակով:
- **Կալանավայրերի մշտադիտարկում.** ՄԱԿ ՓԳՀ-ն սերտորեն ներգրավված է կալանավայրերի պայմանների մշտադիտարկման աշխատանքներին՝ խոցելի ապաստան փնտրողների ժամանակին հայտնաբերման եւ արդյունավետ ուղղորդման, ինչպես նաեւ համապատասխան կառույցների աշխատակիցների կարողությունների ձեւավորման նպատակով:
- **Ինտեգրում.** սոցիալ-հոգեբանական, իրավական, բժշկական եւ դրամական աջակցությանը զուգընթաց ՄԱԿ ՓԳՀ-ն իրականացրել է նաեւ մեր ծառայություններից օգտվող մարդկանց դիմակայունության եւ ինքնաբավության մեծացմանն ուղղված միջոցառումներ՝ տրամադրելով լեզվի, միջին մասնագիտական դասընթացներ եւ եկամտի ստեղծման գործիքներ, ինչպես նաեւ մշակութային եւ համայնքային միջոցառումներ՝ երեխաների, երիտասարդների եւ տարեցների համար:
- **Արտակարգ իրավիճակներին պատրաստվածություն.** ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակում է զարգացնել տեղական կառավարման մարմինների եւ պետական կառույցների կարողությունները՝ կենտրոնանալով արտակարգ իրավիճակներում գրանցման, խոցելիության գնահատման եւ տեղեկատվության կառավարման վրա:

Աշխատանք գործընկերների հետ

- Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ ՄԱԿ ՓԳՀ-ն պաշտպանության միջազգային համակարգի ընդլայնման նպատակով համագործակցում է տեղական շահակիցների հետ: Ուժեղացվում է ապաստան հայցողների իրավական օգնության համակարգը՝ ՀՀ Փաստաբանների պալատի համագործակցությամբ՝ օժանդակության, թարգմանչական ծառայությունների եւ փորձագիտական աջակցության միջոցով:
- Համագործակցելով Արդարադատության ակադեմիայի հետ՝ ՄԱԿ ՓԳՀ-ն ապաստանի եւ քաղաքացիություն չունենալու թեմայով դասընթացներ է մշակել վերջերս ստեղծված Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության (ՄՔԾ) համար: ՄՔԾ-ի եւ ՄԱԿ ՓԳՀ-ի ղեկավարած միջգործակալական հարթակն աջակցում է միջազգային պաշտպանության վերաբերյալ օրենսդրության համապարփակ վերանայմանը՝ այն միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով:
- 2023 թվականի հունվարին ՄԱԿ ՓԳՀ-ն սարքավորումներ է տրամադրել Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերին, որի նպատակն է օժանդակել կրթական գործընթացներին եւ զարգացնել պետական համակարգերի կարողությունները:

Ապաքաղաքացիություն

- «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպված՝ Ապաքաղաքացիության թեմատիկ աշխատանքային խմբի հանդիպումների ընթացքում «Չփաստաթղթավորված եւ ապաքաղաքացիության վտանգի տակ գտնվող անձանց ճանաչման» ծրագիրն ամփոփ ներկայացրել է իր եռամյա աշխատանքը եւ 2023 թվականին ձեռնարկվելիք քայլերը: ՄԱԿ ՓԳՀ-ն մշակել է 2023-2024 թթ. Ապաքաղաքացիության գործողությունների ծրագիրը, որը նույն թվականի մարտին կներկայացնի առանցքային շահագրգիռ կողմերին:
- ՄԱԿ ՓԳՀ գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ն «Ջուլիա Թաֆթ» հիմնադրամի ֆինանսավորմամբ կիրականացնի իրազեկվածության բարձրացման քարոզարշավ՝ ուղղված ապաքաղաքացիության վերացմանը:

ՄԱԿ ՓԳՀ-ի ներկայությունը Հայաստանում

Անձնակազմ	Գրասենյակներ
32 տեղացի աշխատակից	1 գրասենյակ Երեւանում
3 միջազգային աշխատակից	1 գրասենյակ Գորիսում

Ֆինանսական տեղեկություններ (առ 2023 թ. փետրվար)

Ֆինանսական կարիքներ
12.8 միլիոն ԱՄՆ դոլար



ՄԱԿ ՓԳՀ-ն երախտապարտ է գլխավոր նվիրատու պետական կառույցներին, որոնք առանց նախապայմանների, ճկուն նախապայմաններով կամ նախապայմաններով ֆինանսական միջոցներ են հատկացրել:

Բելգիա | Դանիա | Ֆրանսիա | Գերմանիա | Իռլանդիա | Իտալիա | Ճապոնիա | Նիդեռլանդներ | Նորվեգիա | Շվեդիա | Շվեյցարիա | Միացյալ Թագավորություն | Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ՄԱԿ ՓԳՀ-ն շնորհակալություն է հայտնում անհատներին եւ մասնավոր հատվածին առատաձեռն նվիրատվությունների համար: